AURORA
10 YEARS OF IMPACT

Հուլիսի 7, 2025 թ.

Ամրագրեք ձեր տեղն այսօր՝ մասնակցելու 2025 թ. «Ավրորա» մրցանակի շնորհման արարողությանն Էլիս կղզում

Սիրելի ընկեր,

Այս աշուն մենք վերադառնում ենք Նյու Յորք, որտեղ առաջին անգամ աշխարհին ներկայացրեցինք «Ավրորան»: Մենք վերադառնում ենք՝ նշելու մեր գործունեության տասնամյակը եւ հարգանքի տուրք մատուցելու նրանց, ովքեր մարմնավորում են մեր՝ «Երախտագիտությունն՝ ի գործ» գաղափարախոսությունը: Նոյեմբերի 6-ին մենք կհավաքվենք Էլիս կղզում, որտեղ կկայանա 2025 թ. «Ավրորա» մրցանակի շնորհման արարողությունը՝ փառաբանելու այն բացառիկ մարդասերներին, որոնք վտանգում են ամեն ինչ՝ ուրիշներին պաշտպանելու համար: Սա ճիշտ պահն է՝ անդրադառնալու բոլոր այն ձեռքբերումներին, որ ունեցել ենք, եւ վերահաստատելու հանձնառությունը՝ շարունակելու մեր աշխատանքը:

Այսօր, երբ բազմաթիվ կառավարություններ կրճատում են մարդասիրական ոլորտի ֆինանսավորումը եւ փակում դռներն ապաստան փնտրողների առաջ, «Ավրորան» շարունակում է մնալ խոցելի համայնքների եւ տեղում մարդասիրական աշխատանք իրականացնողների կողքին: **Մենք հավատում ենք, որ նրանք, ովքեր օգնում են փրկել ուրիշներին ամենադժվար պահերին, ավելի լուսավոր ապագայի հույս են տալիս մեզ բոլորիս**: Միանալով «Ավրորայի» այս հանձնառությանը՝ դուք անմիջական եւ կենսական աջակցություն եք տրամադրում նրանց, ովքեր ամենաշատն ունեն դրա կարիքը: Ձեր նվիրատվությունն օգնում է, որ նրանք մենակ չմնան դժվարությունների առաջ:

Այս տարի նշելով մեր գործունեության տասնամյակը՝ մենք վերահաստատում ենք այս աշխատանքի հրատապությունն ու տեղական, համայնքահեն մարդասիրական նախաձեռնություններին աջակցելու արդյունավետությունը:

Մենք շատ անելիք ունենք, եւ այդ գործում մեզ անհրաժեշտ է ձեր օգնությունը:

ԱՋԱԿՑԵԼ

2025 թ. համաշխարհային մարդասիրական մրցանակի շնորհմանն ընդառաջ՝ մենք լի ենք նոր նպատակներով եւ հաստատակամությամբ: Այս տարվա մրցանակի շնորհման արարողությունը կլինի ազդեցիկ՝ առանցքում ունենալով սերունդների երախտագիտության եւ ուրիշներին օգնելու մնայուն գաղափարները: Բարերարները, մարդասիրական գործիչները, քաղաքացիական առաջնորդներն ու փոփոխության առաջամարտիկները միասին կփառաբանեն նրանց, ովքեր անգամ ճգնաժամի պայմաններում առաջնորդվում են մարդասիրությամբ: Նրանք եւս մեկ անգամ կհաստատեն, որ յուրաքանչյուր խիզախ քայլ կարող է ալիքի պես տարածվել՝ բերելով մնայուն փոփոխության:

Ամրագրեք ձեր տեղը՝ մասնակցելու 2025 թ. «Ավրորա» մրցանակի շնորհման արարողությանն Էլիս կղզում եւ աջակցեք «Ավրորային» այս կարեւոր պահին:

Երախտագիտությամբ՝

Արմինե Աֆեյան
«Ավրորա» մարդասիրական նախաձեռնության ղեկավար

Միացեք մեզ 2025 թ. «Ավրորա» մրցանակի շնորհման արարողությանը

2025 թ. նոյեմբերի 6-ին մենք կշարունակենք տոնել «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության 10-ամյակը՝ մեծարելով այն բացառիկ անհատներին, որոնք վտանգում են սեփական կյանքը՝ ուրիշներին փրկելու համար: Ի փառաբանություն նրանց՝ այդ օրը տեղի կունենա «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակի շնորհման արարողությունը: Այս տարի այն կանցկացվի հույսի եւ նոր կյանքի յուրօրինակ խորհրդանիշ դարձած Էլիս պատմական կղզում: Միջոցառումն ամբողջությամբ կհյուսվի երկու հիմնական թեմաների շուրջ՝ սերունդների երախտագիտություն եւ բարեգործության երկարատև ազդեցություն:

ԱՄՐԱԳՐԵՔ ՁԵՐ ՏԵՂԸ

Լոկալ ազդեցություն՝ գլոբալ քայլեր. «Ավրորայի» միջոցառումները Լոս Անջելեսում

2025 թ. մայիսի 6-7-ը «Ավրորայի»՝ Մարդասիրության թեմայով կոնֆերանսն ու Մարդու իրավունքների եւ մարդասիրության ֆորումը Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանում համախմբեցին համաշխարհային ակտիվիստներին: «Ավրորայի» տասնամյակի միջոցառումների շրջանակում անցկացված երկօրյա այս հավաքն ընդգծեց տարբեր ոլորտներում փոխկապակցված գործողությունների աճող հրատապությունը:

«Երբ մենք համախմբվում ենք, զգում ենք, որ մենակ չենք: Մենք նույն մարտահրավերներն ու խնդիրներն ունենք: Եվ եթե միավորվում ենք եւ մեկ ցանց կազմում, որտեղ կարող ենք աջակցել միմյանց, դա իդեալական է: Որքան շատ եմ իմանում «Ավրորայի» մասին, այնքան ավելի լավ եմ հասկանում, թե որքան մեծ ազդեցություն այն ունի»:

Ռոյ Մուսալի
«Ավրորայի» մերօրյա հերոս
Սոցիալական զարգացման սիրիական միության հիմնադիր

Մարդասիրության թեմայով առաջին կոնֆերանսը համախմբեց 50-ից ավելի մարդասիրական գործիչների եւ հիմնական շահագրգիռ կողմերին՝ մասնակցելու բովանդակային քննարկումների այն մասին, թե ինչպես հաղթահարել առօրյա մարտահրավերները համայնքներում մարդասիրական աշխատանք իրականացնելիս:

2025 թ. Մարդու իրավունքների եւ մարդասիրության ֆորումն անցկացվեց «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության եւ Լոս Անջելեսի Կալիֆորնիայի համալսարանի իրավագիտության դպրոցի «Խոստում» մարդու իրավունքների ինստիտուտի համատեղ ջանքերով՝ «Խաչմերուկին. համալիր գործողություններ հանուն կայուն ապագայի» ընդհանուր խորագրի ներքո: Շարունակաբար կրճատվող միջազգային օգնության պայմաններում՝ երկու միջոցառումների մասնակիցներն էլ կարեւորեցին համարձակ եւ համայնքահեն ծրագրերը, որոնք համատեղում են մարդասիրական անհապաղ օգնությունը եւ մարդու իրավունքների, արդարության ու կայունության հանդեպ երկարատեւ հանձնառությունը:

«Ոչ ոք չի կարող մտնել քո տարածք եւ ասել՝ ինչպես այն ավելի լավ կառավարել, քան դու ինքդ: Թող բոլորը իմանան, թե ինչ ես անում: Թող քո համայնքը ճանաչի քեզ: Թող քո փորձառությունը խոսի քո փոխարեն»:

Լեյմա Գբովե
«Ավրորա» մրցանակի Ընտրող հանձնաժողովի անդամ
Աֆրիկայի «Գբովե» խաղաղության հիմնադրամի հիմնադիր եւ նախագահ

Աննախադեպ թվով առաջադրումներ՝ «Ավրորա» մրցանակի համար

2025 թ. «Ավրորա» համաշխարհային մարդասիրական մրցանակի առաջադրումների փուլը պաշտոնապես ավարտվեց մայիսի 8-ին: Այն համաշխարհային աննախադեպ արձագանք գտավ՝ մարդասիրական ճգնաժամի աճի պայմաններում: Մեկնարկելով 2024 թ. մայիսին Լոս Անջելեսում կայացած 2024 թ. «Ավրորայի» միջոցառումներից հետո՝ առաջադրումների այս փուլում ստացվեց 868 հայտ՝ ներկայացնելով 800 եզակի թեկնածու, որոնք գործունեություն են ծավալում 120 երկրում եւ տարածքում: Հայոց ցեղասպանությունը վերապրողների անունից՝ ի երախտագիտություն նրանց փրկողների՝ 1 միլիոն ԱՄՆ դոլար «Ավրորա» մրցանակը շնորհվում է այնպիսի անհատների, որոնք վտանգում են իրենց կյանքը, որպեսզի պաշտպանեն ուրիշներին բռնությունից, վայրագություններից եւ ճնշումներից:

«Այն, ինչ մենք տեսնում ենք այս մարդասերների դեպքում՝ պատերազմական գոտիներից մինչեւ փախստականների ճամբարներ, մոռացված գյուղերից մինչեւ մեծ քաղաքներ, ավելին է, քան հերոսությունը: Այս մարդիկ պարզապես չեն խոսում փոփոխությունների մասին, նրանք հենց իրենք են այդ փոփոխությունը: Նրանց փառաբանելը հիշեցնում է այն մասին, որ աշխարհում դեռ շատ հույս կա»:

Համդի Ուլուկայա
«Ավրորա» մրցանակի Ընտրող հանձնաժողովի անդամ
«Չոբանի» ընկերության հիմնադիր եւ գլխավոր տնօրեն

Բացառիկ մարդասերների փնտրտուքը երբեք չի դադարում. հաջորդ «Ավրորա» մրցանակի առաջադրումների փուլն արդեն սկսված է: Օգնեք փառաբանել նրանց, ովքեր լուսավորում են այլոց ճանապարհը:

ԱՌԱՋԱԴՐԵՔ ՁԵՐ ՀԵՐՈՍԻՆ

ԱՋԱԿՑԵՔ

AuroraPrize.com

AuroraLuminaries.com